

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N° ՀԽ-2

Նախարարին կից հասարակական խորհրդի նիստի

ք. Երևան

16 դեկտեմբերի 2016 թ., ժամը՝ 12.00

**Նիստի նախագահ՝**

Հրաչյա Ռոստոմյան

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարար, նախարարին կից հասարակական խորհրդի նախագահ

**Խորհրդի անդամներ՝**

Հարություն Յավրյան

Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե

Խաչիկ Հարությունյան

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի մարզական ակումբ

Արսեն Գաբրիելյան

ՀՀ բազկամարտի ֆեդերացիա

Սամվել Սերոբյան

«Երևանի Վահան Զատիկյանի անվան մարզակումբ» ՀՈԱԿ

Գագիկ Աղաջանյան

«Ապավեն» ՍՊԸ

Յուրի Ալեքսանյան

Հայաստանի մարզական լրագրողների ֆեդերացիա

Գոհար Նալբանդյան

«Մեդիամաքս» լրատվական գործակալություն

Հասմիկ Բաբայան

Հայկական օնլայն լրատվամիջոցների ու լրագրողների ասոցիացիա

**Օրակարգ**

1. Սպորտային միջազգային ֆեդերացիաների անդամ, Հայաստանի Հանրապետությունում համապատասխան սպորտային առաջնություններ անցկացնելու իրավունք ունեցող մարզական ֆեդերացիաները լիցենզավորելու անհրաժեշտության մասին

2. Մարզիկների բժշկական ապահովագրության անհրաժեշտության մասին:

### **Օրակարգի 1-ին հարցի քննարկում**

«Հայաստանի ավտոմոբիլային ֆեդերացիա» ՀԿ-ի նախագահ Գագիկ Աղաջանյանը ներկայացրեց սպորտային միջազգային ֆեդերացիաների անդամ, Հայաստանի Հանրապետությունում համապատասխան սպորտային առաջնություններ անցկացնելու իրավունք ունեցող մարզական ֆեդերացիաները լիցենզավորելու անհրաժեշտության վերաբերյալ իր հիմնավորումները:

**Ելույթ ունեցան՝** ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Հրաչյա Ռոստոմյանը, Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի բաժնի պետ Հարություն Յավրյանը:

**Որոշվեց՝** մինչև 2016 թվականի ավարտը հրավիրել բաց քննարկում, որին կմասնակցեն ավտոմոբիլային սպորտը ներկայացնող բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչները:

### **Օրակարգի 2-րդ հարցի քննարկում**

Հայկական օնլայն լրատվամիջոցների ու լրագրողների ասոցիացիայի լրագրող Հասմիկ Բաբայանը ներկայացրեց մարզիկների բժշկական ապահովագրության անհրաժեշտության մասին իր դիտարկումները:

**Ելույթ ունեցան՝** ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Հրաչյա Ռոստոմյանը, «Հայաստանի ավտոմոբիլային ֆեդերացիա» ՀԿ-ի նախագահ Գագիկ Աղաջանյանը:

**Որոշվեց՝** կազմակերպել հանդիպում Հայաստանի Հանրապետությունում գործող ապահովագրական ընկերությունների ղեկավարների հետ՝ մարզիկների ապահովագրության համակարգ մշակելու և ներդնելու նպատակով:

Հասարակական խորհրդի նախագահ՝



Հ. Ռոստոմյան